

8295

Գրականությունը բոլոր լեզուներին միացնելը.

ԿԱԳԱՆՈՎԻԶ

ԳԻՐԸ № 1

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
===== ՈՒ =====
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

3ԿՈ3

4-12

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Յ Ե Ր Ե Վ Ո Ն

1 9 2 8

113
4212

24 SEP 2006

Պրիւտարներ ըստ լեզուների, միացեալ

Հ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

9 DEC 2005

ԳԻՐԻ № 1

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
== ՈՒ ==
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ
ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

726
4052

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1 9 2 8

16 MAY 2013

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔԱՒ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 1608 Բ
ՏԻՐԱԺ 3500.



4200/91

6957-53

ՎՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերընտրությունները պրոլետարիատի զիկտատորայի պայմաններում աշխատավորության ամենալայն մասսաներին պետական շինարարության մասնակից անելու առաջին աստիճանն է և ամենից լայն ձևը: Ընտրությունների սխառեմը և պրակտիկան վնչ միայն մեղ մոտ, այլ և բուրժուական յերկրներում պետական ամբողջ սխառեմի անբաժանելի մասն է. ընտրությունները (թե սխառեմը, թե պրակտիկան) պետք է տանեն և միշտ ել տանում են դեպի դասակարգային տիրապետության և այդ դասակարգային տիրապետության ապարատի՝ պետական կառավարչության ամրապնդումը:

Մեր պետությունը և պետական կառավարչության մեր ապարատը հիմնված են միլիոնավոր պրոլետարների և պրոլետարիատի յետեից գնացող գյուղացիների ինքնագործունեության վրա: Մեր պետական իշխանության ապարատը հենց իր բնույթով իր բոլոր ողակներում ձուլվում է ընտրողների հետ, մասսաների հետ: Նրանց մասնակցությունը պետական կառավարչության մեջ սկսվում է հենց խորհուրդների ընտրություններից: Խորհուրդների, վորպես պետական կառավարչական օրգանների՝ ղերն ունշանակությունն ել հենց բնորոշում են մեր ընտրությունների սխառեմը, վորը հիմնովին տարբերվում է բուրժուա-

գիտյի ընտրական սիստեմից: Մեր ընտրական սիս-
տեմն ընտրողներին ակտիվութունը դարգացնում է
վնչ միայն ընտրությունների ժամանակ ձայն տալու
միջոցով այլ և նրանով, վոր ընտրողները ակտիվ կեր-
պով մասնակցում են խորհուրդների գործունեության
քննադատությանը, նրանց գործունեության հետագա
գիծը վորոշելու և յերկրի կառավարչության համար
նոր պրոլետարական կազմեր առաջ քաշելու գործում:

ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄԸ

Քաղաքացիական կռիվն անխուսափելիորեն խոր-
հրդային դեմոկրատիան վորոշ չափով սահմանափակեց,
նեղ-ի սկզբնական շրջանում մեր ամբողջ ուշադրու-
թյունը կենտրոնացված էր տնտեսության վերականգ-
ման վրա, մեր տնտեսության տարրական կապերը վե-
րականգնելու, այն ժամանակ մեզ մոտ գոյություն
ունեցող սովը, սոսկալի աղքատությունը վերացնելու
վրա:

Միայն 1924 թվի վերջին և 1925 թվի սկզբին,
յերբ հասունացել էին տնտեսական, քաղաքական և
կուլտուրական անհրաժեշտ նախադրյալները, կուսակ-
ցությունը գործնականորեն դրեց խորհուրդների գոր-
ծունեության աշխուժացման հարցը, ընտրությունների
ժամանակ հրամաններով գործելու՝ մինչև այդ կիրարկ-
վող պրակտիկան փոխելու հարցը:

Այդ խնդրում մենք հաջողություններ ու նվա-
ճումներ ունենք, թե՛ վոչ:

Անպայման ունենք:

Ստեղծված են սեկցիաներ, այդ սեկցիաները լայն
կերպով մասնակցում են մի շարք հարցերի քննու-
թյանը: Խորհուրդների նիստերը կանոնավորված են,
պատգամավորների ակտիվությունը մեծացել է, ընտ-
րություններին մասնակցող ընտրողների քանակն աճել
ու ավելացել է, և նվազել է աքսենտիզմը—անտար-
բեր վերաբերմունքը դեպի ընտրությունները: Կյանքը
բոլորովին ջախջախեց ոպոզիցիայի մեկնաբանությունը
խորհուրդների աշխուժացման մասին, վորպես թե այդ
դեմոկրատիայի այնպիսի լայնացում է, վորը մեր պե-
տության բնույթն է փոխում: Կուլակին մենք չենք
թողնի մտնել վոչ մի հարկ (նրա համար թողնում ենք
«նկուղները»), ներքին հարկերի վոչ մի հեղեղում
թույլ չենք տալիս և չենք տա, կուլակի դեմ պայքա-
րել ենք և կշարունակենք պայքարել, և ինչ դժվարու-
թյուններ ել վոր լինեն, դրանց առաջ մենք չենք նա-
հանջի:

Խորհուրդների աշխուժացման մեր լոզունգը մենք
հակադրում ենք կուլակային այսպես կոչված «գյու-
ղացիական դաշինք» լոզունգին:

Մեր խորհուրդների աշխուժացումը լենինյան լո-
զունգ է, վորը պետք է նպաստի մեր պետական ա-
պարատի վերաշինմանը և բարելավի պրոլետարիատի
դեկավարությունը գյուղացիության նկատմամբ: Բայց
աններելի կլինեի մեզ, բայլեկներին, վոր յերբեք
չենք վախեցել այն բանից, թե մեր սեփական քննադա-
տությունը կոգտագործի թշնամին (իսկ թշնամին աշ-
խատում է արդեն ոգտագործել և վնչ միայն բաց դա-
սակարգային թշնամին, այլ և պրոլետարիատի դիկտա-
տուրայի թշնամիների դրության մեջ ընկած տրոց-

կիստներն ու սապրոնովեցները), յեթե այժմ ամենայն խստությամբ չսահնք, վոր խորհուրդների աշխատեցման գործում, ընտրական կամպանիայի կիսուսական գործում և հենց ընտրությունները կատարելու գործում մենք զեռես ցանկալի դրության լիովին չենք հասել:

Խորհուրդների աշխատանքի հիմնական բացն այն է, վոր խորհուրդները, վորպես իշխանության մարմիններ՝ զեռես բավարար չափով իրենց ազդեցությունն ու ուժը չեն ծավալել, վոր թե խորհուրդների գործունեության աշխուժացումը և թե խորհուրդների վերընտրությունները հաճախ հասկացվում են վորպես ՊԱԶԸ-Ավիաքիմի սովորական կամպանիա: ՊԱԶԸ-Ավիաքիմը վատ բան չէ (յես կողմնակից եմ ՊԱԶԸ-Ավիաքիմին), բայց դա մասսայական կազմակերպության մի տեսակն է, իսկ խորհուրդները՝ պետական իշխանություն:

Խորհուրդների գործնական աշխատանքում մենք տեսնում ենք ահագին բացեր՝ գործնական հարցերի լուծման ժամանակ պատգամաբանների ցուցումները և խորհուրդների ղեկավարների տեսակետից: Մեզ մոտ յերբեմն այս կամ այն ժողովրդատի չինովնիկն ալիլի մեծ համարում ունի, քան խորհրդի պատգամավորը: Բայց չե՞ վոր խորհուրդն իշխանության բարձրագույն մարմինն է և՛ քաղաքում, և՛ գյուղում: Նրան յենթակա յեն մի շարք ձեռնարկություններ, նա պետք է հսկի կյանքի ամբողջ ընթացքի վրա՝ և՛ արտադրական, և՛ կուլտուրական, և՛ վարչական, և՛ քաղաքական: Պատգամավորը, վորպես խորհրդի մասնիկ, պետք

է նրա այդ ֆունկցիաների մեջ մեծ դեր խաղա, նաև կայն նա, ղեկավարաբար, զեռես մինչև այժմ այդ դերը չի խաղում:

Մենք պետք է բարձրացնենք ընտրողի հեղինակությունը՝ վորպես իշխանության ազդեցության պատգամավորինը՝ վորպես նրա կամքն արտահայտողի, և խորհրդինը՝ վորպես իր ընտրողների կամքի կոլլեկտիվ արտահայտչի: Յե՛վ դրա համար խորհուրդների վերընտրությունների ժամանակ պետք է մեր ուշադրությունը սրենք հենց գործի այդ կողմի վրա:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՏՈՒԳՈՒՄ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԲՅՈՒՐՈԿԱՏԻՋՄԻ ԴԵՄ

Վերընտրությունները — խորհուրդների աշխատանքի, ամբողջ պետապարատի աշխատանքի գլխավոր ստուգումն է:

Պետք է աշխատել, վոր այդ ստուգումը չթուլացնի, այլ ուժեղացնի մեր պետությունը, նաև ուժեղացնի և ժողովրդականացնի մասսաների մեջ մեր կուսակցության գիծը, վոր բանա այն բոլոր հիմնադրուկները, վորոնք խանգարում են սոցիալիզմը հաջող կառուցելուն և մասսաների դրությունը բարելավելուն:

Խորհուրդները, վորոնք ղեկավարվում են մեր բայլչեկյան կուսակցության կողմից, պրոլետարական պայքարի բոլոր հաջողությունների և մեր յերկրի շինարարության գործում վճռական դեր են խաղացել: Խորհուրդները պրոլետարիատի բոլոր ռազմական և ստեղծագործական ուժերի լավագույն կազմակերպիչ

կենտրոնները դուրս յեկան. խորհուրդներն միջոցով և նրանց շնորհիվ պրոլետարիատը կարողացավ ամենից հեշտությամբ կենսագործել պրոլետարիատի դաշինքը գյուղացիության հետ: Խորհուրդները վնչ միայն խորտակեցին պետական կառավարչության հին ապարատը, այլև հենց իրենք հանդիսացան նոր պետական ապարատի լավագույն ձևը, վոր յերկրի պետական կառավարչության գործի մեջ միլիոնավոր աշխատողներ և գրավում:

Անցիալի ֆուգորդները, անցման շրջանի դժվարությունները, տնտեսական և կուլտուրական ու քաղաքացիական կռիվների շրջանի առանձնահատուկ դժվարությունները, այդ նոր խորհրդային պետական ապարատի մեջ առաջացրին պրոլետարիատի համար խիստ վնասակար մի նոր ձևի թշնամի՝ բյուրոկրատիզմ և մեծածավալ ապարատ, դեպի մասսաների կարիքները հանցավոր անուշադրությամբ վերաբերվելու ելեմենտներ, կուսակցության դասակարգային գծի խեղաթյուրման փաստեր, վորոնք արգելք են հանդիսանում մեր սոցիալիստական շինարարության գործի մեջ հետագայում հաջողությամբ պրոլետարական և աշխատավորական նոր մասսաներ գրավելուն:

Խորհուրդներն, պետական շինարարության մեջ մասսաներին գրավելու այդ լավագույն կենտրոնի գործունեության աշխուժացումն ել հենց մեր կուսակցության խնդիրն և յեղի այդ Հարիքի դեմ մղվող պայքարի ընթացքում: Կուսակցությունը և խորհուրդները այս ասպարիզում նշանակալից հաջողություններ են ձեռք բերել, բայց այդ հաջողությունները գեոգոհացուցիչ չեն, հատկապես թերի յեն մեր սոցիա-

լիստական շինարարության թափի և պահանջների համեմատությամբ. այդ շինարարությունը ՆեՊ-ի պայմաններում դեմ և առնում բյուրոկրատիզմի, վորը խախտում և մեր նվաճումները: Յեվ հենց բյուրոկրատիզմի դեմ հաջող պայքարելու համար մենք ավելի քան յերբեկից պետք և ուժեղացնենք մեր կուսակցության ծրագրում մատնանշված միջոցների կիրառումը կյանքում:

«Մղելով ամենավճռական պայքար բյուրոկրատիզմի դեմ, Համկոմկուսը այդ Հարիքը լիովին հաղթահարելու համար առաջադրում և հետևյալ միջոցները՝

1. Խորհրդի յուրաքանչյուր անդամին պարտադիր կերպով մասնակից դարձնել պետական կառավարչության վորոշ աշխատանքի:

2. Այդ աշխատանքների հաջորդական փոխարինումը այն հաշվով, վոր նրանք աստիճանաբար ընդգրկեն կառավարչության բոլոր ճյուղերը:

3. Աստիճանաբար վողջ աշխատավոր բնակչությանը գրավել պետությունը կառավարելու աշխատանքի ասպարեզ:

Այս միջոցների լրիվ և բազմակողմանի կիրարկումը, վորը հանդիսանում և հետագա քայլն այն ճանապարհի, վորի վրա վորտք դրեց Փարիզյան Կոմմունան, և աշխատավորության կուլտուրական մակարդակի բարձրացման միջոցով կառավարչության ֆունկցիաների պարզեցումը՝ տանում են դեպի պետական իշխանության վոչնչացումը: Այս կետերի հետևողական կիրարկումը կյանքում հենց Մարքսի—Լենինի պետություն կոմունայի գաղափարի կենսագործումն և:

Հենց այս տեսանկյունով մենք պետք է կիրարկենք առաջիկա ընտրական կամպանիան:

Առանձնապես անհրաժեշտ է ընդդժեխ պատգամավորն Երիտ հետ կանչելու իրավունքը, վորը մեզ մոտ, դժբախտաբար, վերջին տարիներում ընտրողների կողմից թուլլ է կիրառվում, իսկ այնտեղ, վորտեղ կիրառվում է, կիրառվում է մեքենայորեն: Պատգամավորին հետ կանչելը մեր պետությունից պրոլետարական դեմոկրատիզմի, պատգամավորի, իր ընտրողների առաջ ունեցած պատասխանատվությունից ամենացայտուն արտահայտությունն է:

Ընտրողների ակտիվություն ուժեղացումը, իրենց պատգամավորներին սեղմելը, պատգամավորների պատասխանատվության զգացումն ուժեղացնելը իրենց ընտրողների հանդեպ—ահա կարևորագույն հարցերից մեկը, վորի վրա ներկա վերընտրական կամպանիայի ժամանակ պետք է բեկովի մեր ուշադրությունը: Խորհուրդները վերընտրությունները պետք է պրոլետարական պետություն կառուցողների կադրերը լրացնեն լավագույն պրոլետարներից, բարակներից, միջակներից, կուսակցականներից, և անկուսակցականներից: Իսկ հարյուր հազար նոր կառուցողներ և ղեկավարներ առաջ քաշելով, պետական և տնտեսական կառավարչություն գործում միլիոնավոր մասսաներ գրավելով, մենք կարող ենք ել ավելի հաջող կառուցել սոցիալիզմը, բարելավել պետական ապարատը և պայքարել կուլակի և նեպմանի և նրանց զաշնակցի՝ բյուրոկրատիզմի դեմ:

Հիմնական ուշադրությունը պետք է դարձնել այն բանի վրա, վորպիսով խորհուրդների գործնական

աշխատանքն ամբողջովին արտացոլի կուսակցությունից զուսակարգային քաղաքական դիժը:

Այժմ խորհուրդը գյուղում մեծ դեր է խաղում, վնչմիայն ֆիսկադեր, վնչ միայն հարկերի նկատմամբ, այլև տնտեսական տեսակետից. նա, որինակ, շատ հաճախ ստիպված է լինում լուծելու այնպիսի հարցեր, թե հողն ո՞ւմ տրվի կապալով և այլն. յերբեմն բորքովում է պայքարը ֆոկի-ի (չքավորություն) և կուլակի միջև. իսկ գյուղխորհուրդը կուլակի կողմն է պահում: Կան նաև տասնյակ փաստեր, յերբ մի շարք պաշտոնյաներ, վնչ միայն գյուղխորհուրդների, այլ յերբեմն գավառակային գործկոմիների պաշտոնյաներ, կուլակների հետ սերտ կապ են ունենում. գալիս են գյուղ և իջնում կուլակի մոտ, ուտում, խմում նրա հետ և հետո, բնականաբար, հենց նրա գործը շտկում:

Ի հարկե այդ յերեույթները չի կարելի մեր վողջ պետական ապարատի համար տիպիկ համարել. ընդհակառակը, չի ել կարելի համեմատել մեր խորհրդային ապարատի այժմյան վիճակը 1923—24 թվի հետ. բայց և այնպես միևնույն ժամանակ մենք գիտակցաբար վողջ կուսակցություն և անկուսակցականների ուշադրությունը պետք է սրենք նման յերեույթների դեմ մղվելիք պայքարի վրա, վորովհետև հարյուր լավ գործը կորչում է մի վատ գործի պատճառով:

Կամայականություն և բյուրոկրատիզմի դեմ պետք է պայքարել վնչ այս կամ այն պատահաբար բռնված չինովնիկին հեռացնելու միթողներով միայն, այլ խորհուրդների միջոցով պետական շինարարություն մեջ լայն մասսաներ ներգրավելու, նոր մարդկանց մեծ կադրեր առաջ քաշելու, նոր աշխատակիցներ

ստեղծելու միջոցով: Ինչ են ասում որինակ վոտյակները մարդի տվյալները: Բանից գուրս և դալիս, վոր այնտեղի մարդային հողային վարչության մեջ նստել են նախկին սպաները, խորհրդային իշխանության պրոլետարիատի և գյուղացիության կատաղի թշնամիները: Հապա ինչո՞ւ այնտեղ առաջ չեն քաշվել բանվորներ և գյուղացիներ: Ինչո՞ւ չեն նստացրել այնտեղ հարյուր, իսկ Միության մեջ հազարավոր նոր ուժեր, նոր աշխատողներ, վորոնք անպայման կան մեղ մոտ, վորոնք արդեն հասունացել են:

Մենք այժմ կարող ենք և պետք է այդ անենք:

ԸՆՏՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

խորհուրդների աշխատանքների թերություններն ամենից սուր կերպով ընտրությունների ժամանակ են արտահայտվում: Վերցնենք, որինակի համար, այնպիսի հիմնական և կարևոր հարց, ինչպես հաշվետվությունն և ընդհանրապես ընտրությունները: Չե՞վոր, յերբ ընտրողները գործնականորեն քննարկում են հաշվետվությունը և հրահանգներ կազմում, այդ—ինքնուտախիքյան պետական իշխանության անցյալ ու ներկա գործունեության ամբողջ ծրագրի քննությունն է:

Բայց ի՞նչ ենք նկատում հաշվետվության կամպանիայի ժամանակ:

Ինչպես և կիրարկվում այդ կամպանիան, ի՞նչպես են կազմվում հաշվետվությունն ու հրահանգները:

Մեծ մասամբ՝ կամ «ազդիտպրոպագանդիստական» մի փաստաթուղթ կամ նեղ գործնական դեպից դեպից

հավաքած առաջարկներ, մինչդեռ պետք է հաշվետվությունն ու հրահանգները կազմել ու մշակել, վորպես յերկիրը կառավարելու պետական ակտեր:

Մենք արդեն շատ ենք սիրում ընկնել «բարձր» քաղաքականության հարցերի հետևից, մոռանալով, վոր որինակ հենց տեղական բյուջեն կուսակցության և կառավարության ընդհանուր ձեռնարկումների հետ համադրելը՝ ինքնին բարձր քաղաքականություն է: Արդեն չափից դուրս մենք կենտրոնանում ենք միայն նրա վրա, վորպեսզի այս կամ այն թեկնածուին անցկացնենք, իսկ մինչև այդ, զլխավորը վիճ թե այն է, թե ո՞ւմ անցկացնենք,—անցկացնելը մենք կանցկացնենք,—այլ այն է, թե ի՞նչ պես անցկացնենք, ի՞նչ պես խորհրդի անդամ ընտրվածին մասսայի հետ կապենք, ի՞նչ պես սովորեցնենք նրան աշխատելու՝ իր պետության կառավարչությանը ակտիվորեն մասնակցելու:

Ի հարկե, խոսք անգամ չի կարող լինել այն մասին, թե հրահանգների մակարդակը, ընտրությունների մակարդակը պետք է իջեցնել, հասցնել մասը մոռնալը ընթացիկ գործերի, նախկին զեմստվոների ընտրությունների մակարդակին, մինչև բաղնիքի՝ կամ լվացքատան մակարդակին. բայց բայլելիկների ամբողջ հմտությունը, կուսակցության և քաղաքական ղեկավարների ամբողջ հմտությունը պետք է լինի այն, վոր բաղնիքի և լվացքատան կառուցման հարցերը շաղկապվի, միացվի մեր սոցիալիստական շինարարության հիմնական հարցերին, մեր քաղաքականության հիմնական հարցերին, մեր կուսակցության հիմնական գծին. այդ—շատ զգուշ գործ է: Հենց դրա

համար եւ հրահանգները, վորոնք պետք ե խորհուրդներէ աշխատանքները ղեկավարեն մեկ տարով, կամ յերկու տարով, մինչեւ նոր ընտրութիւնները:— պետք ե մշակել ավելի քաղաքականորեն, ավելի հմտորեն ու հիմնականորեն, և վոչ թե հարեւանցիորեն, կամ վոչ ընկղմվելով նեղ գործնական հարցերի մեջ և կամ ճախրելով ընդհանուր ազդեցութիւն Ֆրաչիւսի բարձունքներում, մոռացութեան տալով քաղաքական խոշոր խնդիրները:

Մենք պետք ե ներկա ընտրական կոմպանիան վարենք ինքնաքննադատութեան պայմաններում, այդ պատճառով հաշվետւութիւններում պետք ե լուրջ ուշադրութիւն դարձնել մեր աշխատանքի մի շարք գործնական հարցերի վրա: Յերը մենք հաշվետւութեամբ գնում ենք ընտրողի մօտ, գնում ենք նրա մօտ, վորպէս որինսդրի մօտ, վորպէս իշխանութեան աղբյուրի մօտ, ապա այդ արդէն այլ բան ե, քան մի ինչ վոր սովորական զեկուցում լսելն ու այդ զեկուցումը քննադատելը: Խորհուրդների հաշվետւութիւնը պետք ե այնպէս քննադատել և այդ հաշվետւութեան առթիւ այնպէս պետք ե վիճարանութիւններ ծավալել, վոր թերութիւնները վերացնելու համար ցուցումներ և ապագա աշխատանքի համար ծրագիր տրվի:

Իսկ հաշվետւութիւն և հրահանգ կազմելու հարցում կուսակցական կազմակերպութիւնները, վորպէս վճռական, ակտիւ, գործոն ուժ, ինչպիսի մասնակցութիւն ունեն: Ո՞ւր են պրոֆմիութիւնները:

Նրանք սովորաբար ըստ ետեւեան քննութեան եւ չեն առնում հաշվետւութիւն— հրահանգը, հենց

այդ պատճառով եւ խորհրդի աշխատանքի համար այդ վճռական փաստաթուղթ չի դառնում:

Կուսակցութիւնը հանդիսանում ե մեր վողջ հասարակացութեան հիմնական առանցքը: Իսկ խորհուրդների և գործադիր կոմիտեների հաշվետւութիւնները դրվում են բլիշների դռնաց նիստերում: Ի հարկե պարտադիր չե, վոր բլիշների ժողովներում ամբողջ հաշվետւութիւնը քննութեան առնվի, վորովհետեւ այդ արվում ե բանվորական ժողովներում, բայց բլիշները, վորպէս այդպիսիները, արդէք մասնակցում են հաշվետւութիւնների և հրահանգների կազմելուն և քննութեանը:

Ընտրող պրոլետարի ակտիւութեան դործում պրոֆմիութեան աշխատանքն եւ վորոշ դեր ե խաղում, սակայն պրոֆմիութիւնների ակտիւութիւնը պետք ե վորոշել վոչ միայն դրանով, այլ նաեւ այն բանով, թե պրոլետարիատի այդ ակտիւութիւնն ո՞ւմ ազդեցութեամբ ե աճել, ի՞նչը և ո՞վ ե ներգործել նրա վրա: Բանվորը, վորպէս ակտիւ ընտրող, ընդհանրապէս ի՞նչ չափով ե մասնակցութիւն ունեցել: Պրոլետարիատի մեջ աշխատանք են կատարում և՛ կուսակցութիւնը, և՛ պրոֆմիութիւնները, և՛ խորհուրդները. անհրաժեշտ ե, վոր պրոֆմիութիւնները, վորպէս ինքնուրույն հասարակական կազմակերպութիւն, իր ամբողջ կարողութիւնը և իր ամբողջ ուժը կենտրոնացնի խորհուրդների վերընտրութեան կամպանիայի վրա:

Մենք պետք ե ընտրութիւնների ժամանակ բարձրացնենք և՛ ընտրողների, և՛ ընտրվողների քաղաքական մակարդակը, դրա հետ միասին բարձրացնելով և՛ հաշվետւութեամբ ընտրողների մօտ գնացող

իշխանության մակարդակը. խորհուրդներն իրենք պետք է ուժեղացնեն վերընտրական կամպանիան կիրարկելու իրենց աշխատանքը, վորովհետև չի կարելի խորհուրդներն ընտրել առանց իրենց՝ խորհուրդներին:

Մի քանի խոսք կ'ընեն մասին և կ'ոմիջբրիտմիության մասին: Մի անգամ ընդմիջտ պետք է ըմբռնել, վոր յերբ մենք խոսում ենք բանվորների և գյուղացիների ակտիվության մասին, մենք ի նկատի ունենք միաժամանակ և՛ բանվորուհիներին, և՛ գեղջկուհիներին, և՛ յերիտասարդությանը և՛ ծերերին: Մենք քիչ հրահանգներ չենք տվել և՛ կանանց մասին, և՛ կոմյերիտմիության մասին:

Այժմ ամբողջ հարցն այն է, վոր վերընտրությունների ժամանակ կանանց և կոմյերիտմիության ակտիվությունն այնպես ծավալել, վոր նրանք խորհուրդներում անհրաժեշտ տեղ կարողանան գրավել:

Մենք վոչ մի դեպքում չպետք է աչքաթող անենք ինչպես քաղաքների, նույնպես և գյուղական խորհուրդների սոցիալական կազմը:

Ղեկավար դերը մենք պետք է բանվոր դասակարգի ձեռքին պահենք, և պետք է դադարահեղ ավելի շատ բանվորներ առաջ քաշել: Պետք է չքափորության և բատրակների դիրքերն ամեն կերպ ուժեղացնել, իսկ ակտիվ խորհրդային միջակին մենք պետք է առաջ քաշենք:

Աշխատակիցներ առաջ քաշելու գործում ինքնաբերականությունը ծավալմամբ, խորհրդային, պրոֆմիութինական դեմոկրատիայի ծավալմամբ մենք պետք է կուսակցության ղեկավարությունը համա-

դրենք ցածր խավերից ընտրված մարդկանց առաջ քաշմանը: Թեկնածուների հարցը շատ կարևոր և սուր հարց է: Ի՞նչպիսի թեկնածուներ մենք պետք է նշենք: Անհրաժեշտ է, վորպեսզի կուսակցական կազմակերպությունը նախորդ ընտրողների տրամադրությունը հաշվի առնի՝ անցկացնի կուսակցության թեկնածուներին, չհրաժարվելով ղեկավարությունից, թեկնածուներ առաջադրելուց և միևնույն ժամանակ չճնշելով ընտրողների ազատությունը: Այս է վարպետությունը, այս բանը մենք բոլորս դեռ չենք սովորել: Հաճախ այսպես է պատահում. առաջին՝ հնարավորություն չեն տալիս հենց ժողովում թեկնածու առաջարկելու, յերկրորդ՝ թեկնածու յեն առաջարկում առանց հաշվի առնելու այն բանը, վոր ընտրողները դեմ են նրան: Հենց ժողովում թեկնածուներին անցկացնելու ժամանակ բացակայում է ճկունությունը. որինակ՝ Իվան Իվանովիչ Սիգորովը, մի հրաշալի մարդ, բջիջի բյուրոյի անգամ, առաջադրված է վորպես թեկնածու, ինչպես կարելի չէ թույլ տալ, վոր նրան չանցկացնեն: Բայց, ընտրողը ուզում է վոչ թե Իվան Իվանովիչ Սիգորովին, այլ ընտրում է մի ուրիշ կոմունիստի, կամ կուսակցության թեկնածուի և կամ անկուսակցական Իվանովին: Ընտրողների այդ տրամադրությունը հաշվի չեն առնում, այլ մտածում են. «Ինչպես կարելի չէ այլ կերպ, այս պրեստիժի հարց է. չե՞ վոր կուսակցության ղեկավարությունն է խախտվում, պետք է պնդենք»: Ի հարկե պնդել կարելի չէ, ադիտացիա մղել կարելի չէ և պետք է: Ավելին, յեթե այս կամ այն թեկնածուի դեմ

0200-91

արվող առարկութիւններին մեջ քաղաքական և հասկանա-
ղարկական բան եք նկատում, յիթե նկատելի չեն կու-
լակութեան վերոշակի գործողութիւններ, այն ժամանակ
և՛ կուսակցական ընկեր, և՛ մենք բոլորս կոմունիստա-
կան խանդավառութեան և համոզմունքի ամբողջ ուժով
պետք է կռվենք այդ թեկնածուի համար: Բայց և հար-
կավոր ե շատ մեծ ճկունութիւն, պետք է ընտրողնե-
րի ազատութիւնը չճնշել: Ահա թե ինչու մենք պետք
է այստեղ այնպես անենք, վոր կուսակցութեան դե-
կավարութիւնը պահպանենք, ղեկավարութիւնից
չհրաժարվենք, պոչ չդառնանք, պոչից չզնայնք սըրտ-
նեղենք ու խռովենք, վորով և կուլակի, աղմկարարնե-
րի, վորեւե կազմակերպված խմբակի հնարավորու-
թիւն չտանք կուսակցութեան գիծը խախտելու և
այլն, բայց դրա հետ միասին մենք պետք է այնպես
ղեկավարենք, վոր ընտրողներին հաշվի առնենք:

Հրամայելը հեշտ է: Ամեն մի հիմար կարող է
դուրս գալ և ասել. «հա, դեհ, շրջկումը նշել
է այսինչին՝ դուք պետք է ընտրեք». իսկ գաղափա-
րապես սեղմել աղմկարարին, խառնակիչին, նրան,
վոր դեմ է կուսակցութեանը, շարժել մեզ համակրող
յուրաքանչյուր ակտիվ անկուսակցականի, շարժել
գաղափարականորեն բայց լեղիմի համար, պրոլետար-
իատի ղեկատարութեան համար պայքարողներին, շարժ-
ման մեջ դնել և ամբողջ մասսային՝ այդ հեշտ բան չէ,
դուրին չէ կատարելը, իսկ այդ մեր ընտրական կամ-
պանիայի նպատակն է: Խորհուրդներին աշխուժացումից
հետո հակահեղափոխականներն առանձնապես ուժեղ
կերպով պնդում և ուռցնում էին այն փաստը, վոր
խորհուրդներում կոմունիստներին տոկոսը պակասել

է: Նրանք վոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ,
վոր կուսակցութիւնը միանգամայն գիտակցորեն և
արեւ այդ, վորպեսզի խորհուրդներին մեջ անկուսակ-
ցական նոր բանվորական, գյուղացիական ակտիվ
գրավի: Սրանից բոլորովին չի հետևում, թե մենք
այդ գիծն արսուրդի կհասցնենք, թե մենք հետագա-
յում կոմունիստներին տոկոսը կիջնենք: Ինձ թվում
է, վոր այն տոկոսը, վորը մենք ունենք, ճիշտ փոխ-
հարաբերութիւն է, ավելի պակասեցնելը միտք չունի,
ինչպես քաղաքների, նմանապես և գյուղերի խոր-
հուրդներին վերաբերմամբ, իսկ մի շարք խորհուրդնե-
րում կոմունիստներին և կոմյունիստների քանակը
ողտավետ է ավելացնել, ի հարկէ, ճիշտ ղեկավարու-
թեամբ, առանց վարչական ճնշման:

Խորհրդային մարմիններին կուսակցական, պրո-
ֆեսիոնալ, չքավորական, կոռուպտիվ կազմակերպու-
թիւնների աշխատանքից և կախված այն հարցը, թե
ընտրութիւնները բյուրոկրատիկ ձևով կընթանան,
թե՞ վորպես մասսայական քաղաքական կամպանիա՝
այսինքն այնպես, ինչպես մեզ պետք է:

ՄԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Մենք պետք է մասսաներին մոբիլիզացիայի յեն-
թարկենք, մեր խորհուրդների գործնական աշխա-
տանքներին շուրջը՝ վորոնք մեր կուսակցութեան լե-
նինյան հիմունքներով են կառարվում պետք է նրանց
ավելի սեղմ կերպով համախմբենք մեր կուսակցու-
թեան շուրջը:

Մենք դիմում ենք ընտրութիւններին վոչ բարձրա-

գոչու ըստ մասնատարած ֆրազներով և պլատֆորմաներով, վորով առանձնապես աչքի յեն ընկնում բուրժուական ընտրությունները, և վորն այնպես հաճույքով ընդորինակում են տրոցկիստները: Մեզանում բուրժուական իշխանությունն չի, վորին մենք ոպողիցիոն պահանջներ ներկայացնելը:

Մեզանում մասսաների շահերը և խորհրդային պրոլետարական պետության շահերը նույնն են: Դրա համար մեզ մոտ ընտրական պլատֆորմայի հարցը բոլորովին այլ կերպ է դրվում, քան այդ հարցը դրվում է բուրժուական յերկրներում: Այնտեղ բուրժուական և ռադիկալ սոցիալ-ոպորտյունիստական կուսակցություններն ընտրողներին խաբելով, մեծադորդ խաբեբայական խոստումներ տալով, ձայներ են վորսում: Իսկ կոմունիստներն այնտեղ պրոլետարիատի դասակարգային պահանջները հակադրում են բուրժուազիային և բուրժուական պետությանը: Այնտեղ կոմունիստական պլատֆորման գոյություն ունեցող ռեժիմի հանդեպ խիստ ոպողիցիոնն է:

Իսկ մեր ընտրական կամպանիան հիմնականում կենտրոնացած է մի կողմից՝ պետական ապարատի բարեկարգման ու բարելավման, մասսաներին պետության կառավարման գործին մասնակից դարձնելու հարցի վրա, մյուս կողմից՝ սոցիալիստական տնտեսության բարձրացման, առաջին հերթին յերկրի ինդուստրացման և դրանով աշխատավորության տնտեսական և կուլտուրական պայմանների հետագա բարելավման հարցերի վրա:

Մենք պետք է բանվոր դասակարգի և դյուղացիության առաջ լայն կերպով ծավալներ կուսակցության և խորհրդային իշխանության կողմից նախատեսած շինարարության և մասսաների դրության բարելավման վերաբերյալ մեր դրական ծրագիրը: Վոչ թե, ինչ վորնոր ուղիներ գտնելու զեզերումներ, այլ բազմամիլիոն մասսաների միջոցով կուսակցության և խորհրդային իշխանության կողմից նախատեսած ձեռնարկումների ստուգում և ընտրողների առաջարկությունների հաշվառման հիման վրա նախագծված ուղիով հաջող առաջխաղացման միջոցների խորը մշակում: Իսկ այդ ուղին մեր ծրագիրն է. այդ, նախ և առաջ յերկրի ինդուստրացման հետագա զարգացումն է, ծանր արդյունաբերության վերելքն ու զարգացումը, լենինյան պլանի հետագա յեռանդուն կենսագործումը, կոոպերացման ծավալումը, չքավորության միախմբումը կոլեկտիվ տնտեսությունների մեջ և հացի խոշոր գործարանների խորհրդային տնտեսությունների կազմակերպումը. ինչ դժվարություններ էլ վոր մեր առաջ կանգնեն՝ մենք չպետք է և չենք նահանջի այդ ուղուց: Իսկ դժվարություններ կան և կլինեն:

Չնայած այն դժվարություններին, վոր մենք ունենք այժմ մատակարարման բնագավառում, աշխատավորձի բարձրացման տեմպի բնագավառում, բնակարանային շինարարության բնագավառում, չքավորության և միջակ գյուղացիության դրության թեթևացման բնագավառում,—մենք այնուամենայնիվ չպետք է փրնթփնթանք կամ մեր «բախտից» դժգոհենք, վորովհետև չնայած վերոհիշյալ դժվարություններին մենք զնում ենք բանվորների և դյուղացիների մոտ ընդ-

հանուր առմամբ ակտիվ բալանսով և՛ տնտեսութեան ասպարիղում, և՛ հենց իրենց մասսաների զրութեան ակտիվ բալանսով:

Մենք Գնեստգործկոմի անցյալ տարվա մասնիֆեստը կյանքում կիրառելու գործում արդեն ղրական արդյունքներ ունենք. քանի զնուծ, այնքան 7-ժամյա բանվորական ուրվա կենսագործման շրջանակներն ընդարձակվում են: Չնայած առանձին շրջանների հացի անբերրիության՝ մենք այժմ արդեն հացի ղժվարութուններից դուրս ենք գալիս. այս տարվա ընթացքում հսկայական չափերով մեծացավ պրոլետարական պետության կողմից գյուղացիությանը ցույց տրվող տնտեսական ոգնութունը, առանձնապես սերվող տնտեսական հարկից ազատված և չքավորական տնտեսութունների 350|0-ը, գյուղում ընդարձակվում են կոլեկտիվ տնտեսութունը և լիոպերատիվ շինարարութունը, բանվորական բնակարանային շինարարութունը ընդարձակվում և: Այս բոլորը պետք է մասսաների առաջ ցուցադրել կենդանի կերպով, թրվելով ու փաստերով:

Վերցնենք որինակի համար հենց մեր բյուջեն: Համապետական և տեղական բյուջեները վերջին տարիներում հսկայական չափերով աճել են:

Իսկ բյուջեյի աճումը տնտեսութեան աճման և մասսաների նյութական բարորութեան աճման ամենագայտուն ցուցանիշն է: Բյուջեյի համարյա ամբողջ աճումը վերջին տարիներում՝ յերկու ուղղությամբ է գործադրվել—կուլտուրական և տնտեսական:

Մենք պետք է կարողանանք մասսաների առաջ կենդանի ձևով պարզել նրա մուտքն ու յեւթը և ըստ

կուլթյան քննել, մասնակից անելով այդ քննութեանը մասսաներին, չսահմանափակվելով «ընդհանրապես» բյուջեյի վերաբերյալ ընդհանուր ֆրազներով:

Չպետք է սահմանափակվել միայն մեր աճման ղրական կողմերի բացատրութեամբ, ձգտելով մեր նշվածումները ցույց տալ պայծառ ղույներով, այլ պետք է գալ իր ընտրողի, ղեպի իր հարաղատ ղասակարգի մոտ, բաց անելով ամենայն ճշտութեամբ մեր շինարարութեան բոլոր ասպարիղներում, և՛ պետական մեծ գործերում, և՛ կոնկրետ մանր գործերում մեր ունեցած բոլոր թերությունները, բացերը և խեղաթյուրումները, վորոնք հարվածում են բանվորին ու գյուղացուն:

Պետք է ուղղակի ասել, վոր յիթե մենք ընտրական ժողովներում կարողանանք բանվորների ակտիվությունն ուղղել արտադրութեան լավացման, արտադրութեան ռացիոնալացման, արդյունաբերութեան կառավարման կողմը, յիթե գյուղացիական ընտրական ժողովներում մենք ակտիվությունն ուղղենք ղերքի բարձրացման հարցերի կողմը, գյուղատնտեսական ձեռարկումների ղարգացման, կոլտնտեսություններ, համայնական ձևով հողը մշակող արտելներ, մեքենա-ոգտագործական ընկերություններ կաղմակերպելու կողմը, յիթե մենք կարողանանք գյուղացիութեան առաջ իր ամբողջ լըլութեամբ ղնել այն հեռակարը, վոր մի հեկտար հողը, վոր այժմ 655—819 կելոգրամ է տալիս, տնտեսությունը լավ հիմքերի վրա ղնելու ղեպքում կարող է 1228 կելոգրամից մինչև 1720 կելոգրամ և ավելի տալ, այն ժամանակ ղնտրական կառավարիան մեղ ավելի կամբաղնղի վնչ միայն

քաղաքականապես, այլև տնտեսապես, կամրապնդի պրոլետարիատի դաշինքը գյուղացիութեան հետ և չքավորութեան ու բատրակների միատեղ աշխատանքը միջակի հետ, և մենք կարող ենք այդ հողի վրա ամենավճակաւ կերպով հակահարկած տալ կռուակին:

Այդ տեսակետից ընտրական կամպանիային հատուկ ոգնութիւն պետք է ցույց տա կոոպերացիան, վորը, դժբախտաբար, նախընթաց ընտրական կամպանիաների ժամանակ հանդես չի յեկել՝ վորպես ակտիվ գործող ուժ: Մենք պետք է այս ընտրական կամպանիային ժամանակ ուժեղացնենք կոոպերացիայի դերն եւ նշանակութիւնը:

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր այս խոշորագույն հարցերի հետ մենք պետք է տեղերում ընտրողների առջ զուրս գանք նաև բանվորների և գյուղացիների կենցաղի բարելավման հետ կապված հարցերով: Պետք է դնել բնակարային շինարարութեան հարցերը (արդիւնքները, շինարարութեան մեջ ունեցած նվաճումներն ու թերութիւնները, ապագա շինարարութեան համար մոտավոր պլան նշելը, այդ բնակարանային շինարարութեան մեջ խորհուրդների կատարելիք դերը և այլն): պետք է քննութեան առնել քաղաքների, գյուղերի բարեկարգման, ճանապարհների, կամուրջների կառուցումների ծրագրերը, գոյութիւն ունեցող դպրոցական ցանցը և ապագայում այն ընդլայնելու հնարավորութիւնները և այլն: Պետք է դնել առողջապահութեան հարցերը, աշխատանքի պաշտպանութեան հարցերը, վորոնցից ի միջի այլոց, վերջին ժամանակները խորհուրդները զգալիորեն կտրվել են: Պետք է դնել նաև մատակարարման հարցերը (մատակարար-

րումն այնպես կազմակերպել, վոր հերթերը վերացվեն), գների հետագա իջեցման հարցերը, պետական ապարատի մեջ ավելորդ ծախքերը հայտնաբերելու և խնայողութեան ռեժիմ կիրառելու հարցերը: Մի խոսքով, բանվորա-գյուղացիական կենցաղի բոլոր հիմնական հարցերը, պետական, կոոպերատիվ, տնտեսական և այլ կազմակերպութիւնների աշխատանքները պետք է շոշափվեն ընտրական ժողովներում:

Հաշվետու կամպանիան արդեն պետք է ըսկսել հենց այժմ, չաշխատել վերջացնել այն միանգամից, այլ անել հենց նույն ընտրողների մի ամբողջ շարք ժողովներ, ղեկուցումների մի ամբողջ սերիա, յուրաքանչյուր ղեկուցման գործնական կոնկրետ քննութեամբ:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ՅԵՒ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Մեր յերկրում, բացի կոմունիստական կուսակցութիւնից՝ քաղաքական կուսակցութիւնների չկան, մեզ մոտ պարլամենտական քաղաքական դեմոկրատիա չկա: Ընկերներից վոմանց մեջ կարող է հարց ծագել, թե, դե՞հ ել ինչու ուռցնել ընտրական կամպանիայի քաղաքական նշանակութիւնը: Որենք կա, առանձնապես պայքար չի լինի, հանգիստ կատարենք ընտրութիւնները ապարատային կարգով:

Հարցը այսպես դնելը միանգամայն բոլորովրատական է և ամենավտանգավոր քայլ է:

Այո, մեզ մոտ քաղաքական կուսակցութիւնների չկան, բայց կան դասակարգեր: Յեւ մեր յերկրում

յեղած առանձին դասակարգերի քաղաքական տրամադրություններն ընտրությունների ժամանակ, ի հարկե կարտահայտվեն այս կամ այն կերպ, այս կամ այն ձևով:

Վերջին տարիներում անպայման քաղաքական պայքարը սրվել է: Սոցիալիստական տնտեսության աճման, պրոլետարիատի՝ քանակական և վորակական աճման հետ մենք ունենք գյուղի շերտավորման աճում, մեր թշնամի դասակարգերի (կուլակի և նեպմանի) աճում: Հակասությունները սրվում են, իսկ պրոլետարիատի և սոցիալիստական տնտեսության աճումը վնչ միայն չի թուլացնում կուլակի դեմադրությունը, այլ կատաղեցնում է նրան, ուժեղացնում է նրա հարձակումը, սրում դասակարգային պայքարը: Ներկա մոմենտում, մենք ուզում եյինք այդ, թե չե, — մենք դասակարգային պայքարի սրվածություն անկասկած տեսնում ենք: Քաղաքում պրոլետարիատին հակադրված են նեպմանները, և վնչ միայն նեպմանները, այլ և բուրժուական ինտելիգենցիայի մի մասը, վորը նեպմանների հետ է ընթանում, վորը համենայն դեպս նրանց հետ կլինթինթա Գյուղում ունենք գյուղական պրոլետարիատ — բատրակներ, մեր հենարանը գյուղում — չքավորությունը, և մեր զաշնակիցը — միջակ գյուղացիությունը, վորը, ի միջի այլոց, բոլորովին զեղծ է այս կամ այն յերիբումներից: Բայց մենք գյուղում ունենք նաև գաղաղած, այսպես ասած, յերգվյալ դասակարգային թշնամի՝ կուլակը, չարաշահը, վաշխառուն, վորը խիստ կերպով դեմադրում է և կղիմադրե մեր բոլոր ձեռնարկումներին:

Մենք պետք է ընտրական կամպանիան այն-

պես կիրառենք, վոր ուժեղացնենք և ամրացնենք մեր քաղաքական գլուքերը: մենք պետք է խմանանք քաղաքականապես մերկացնել այն դասակարգերին ու խմբերին, վորոնք ընտրությունների ժամանակ աջ վտանգները սնուցող աղբյուրներ են հանդիսանում: նրանք այս կամ այն ձևով դուրս կգան մեր դեմ: Վերընտրությունների ընթացքում պետք է մերկացնել կուլակին և նեպմանին (վորոնց հաճախ պաշտպանում են ինտելիգենցիայի առանձին շրջանները), պետք է ամրապնդել միջակ գյուղացիության հիմնական մասսայի կապը պրոլետարիատի հետ և տանել պրոլետարիատի յետևից, վորպես յերկիրը կառավարող հիմնական ուժի:

Ընկեր Ստալինն իր «Հարցեր ու պատասխաններ» գրքում պարզ կերպով ցույց տվեց, թե մեզ մոտ դասակարգային պայքարն ինչ ձևերով է ընթանում:

Դասակարգային պայքարն ընթանում է մի կողմից կուլակի և մյուս կողմից չքավորության ու բատրակի պայքարի գծով: Դասակարգային պայքարը պրոլետարիատը մղում է պրոլետարական պետության միջոցով կուլակի և նեպմանի դեմ: Այդ պայքարը ընթանում է գլխավորապես գյուղատնտեսական ապրանքների չարաշահության դեմ պայքարելու, գների գծով, հարկերի գծով, վորովհետև կուլակը ձգտում է ազատվել հարկերի այն հիմնական ծանրությունից, վոր դնում ենք նրա վրա, և այլն:

Վորոշ ներհակություններ (չնայած վոչ արմատական) կան պրոլետարիատի և միջակ գյուղացիության միջև, ներհակությունները արմատական չեն այն պատճառով, վոր պրոլետարիատի հիմնական գիծը — դա

մեր յերկրի վոչ կապիտալիստական ուղու դարգացման և մեր դարգացման սոցիալիստական ձևերի ամրապնդման համար մղվող պայքարն է: Դարձ ղեպի կապիտալիզմը ամենասոսկալի հարվածը կլինե՞ր մեր յերկրում՝ միջակի համար: Այդ տեսակետից միջակի հետ դաշնակցելու ամուր հիմքեր կան մեզ մոտ: Միջակի հետ կնքված դաշինքը անխախտելի յի, բայց ընթացիկ ներհակություններ կան:

Պրոլետարիատն այժմ վճռական կուրս է ընդունել յերկրին ինդուստրացման յենթարկելու. առանց յերկրի ինդուստրացման, առանց ծանր ինդուստրիայի դարգացման, մեր յերկրը չի կարող սոցիալիստական շինարարության ուղիների վրա մնալ. առանց սրանց համաշխարհային կապիտալիզմն մեզնից ուժեղ կլինի: Գյուղացիությունը, նրա հիմնական մասնան հենց դրանով էլ շահագրգռված է, վոր չափով նա շահագրգռված է մեր դարգացման վոչ կապիտալիստական ուղիով, սոցիալիզմի հաջողություններով և հաղթանակով մեր յերկրում:

Բայց կան ընթացիկ ներհակություններ. միջակին, որիննակ, ճնշում է հարկի վորոշ ծանրությունը, ինչպես և այն, վոր մենք հացի համար չենք կարող վճարել այն գինը, վոր համապատասխաներ արդյունաբերական ապրանքների գներին, վորովհետև, այդ մեր արդյունաբերությունը բոլորովին կքայքայեր, և հետևապես, վերջին հաշվով, միջակի ցանկություններին հակառակ բան դուրս կգար: Միջակը հենց այդ հարցերում ընկնում է յերբեմն կուլակի ազդեցության տակ: Այդ արամադրություններին պետք է ամենավճռական հակահարված տալ: Միջակներին զիջումներ

անել հնարավոր է, յերբեմն հարկավոր է, բայց մենք յերբեք չենք կարող այնպիսի զիջումներ անել, վորոնք հիմնովին խորտակեն մեր արդյունաբերությունը, ինդուստրիան, վորոնք ձեռնտու լինեն արտաքին կապիտալին, վորոնք ձեռնտու լինեն ներքին կապիտալին, ձեռնտու լինեն կուլակին, վորը չի հանդուրժում խորհրդային իշխանությունը և այս հասարակակարգը: Այդպիսի զիջումներ մենք չենք կարող անել, — նշանակում է մեր և միջակների հարաբերության մեջ վորոշ դժվարություններ անխուսափելի յեն, բայց այդ դժվարությունները լուծելի յեն: Մեր կուսակցության քաղաքականությունն ուղղված է հենց այն բանին, վոր գյուղացիության հիմնական մասսային՝ միջակին պրոլետարիատից չվանենք դեպի կուլակը, վորն ամեն կերպ տշխատում է նրան իր կողմը գրավել:

Կուլակներին պաշտպանում է միջակների աննշան վերնաշերտը, վորի տրամադրությունն անկայուն է: Իսկ ինչ վերաբերում է ամբողջ միջակ գյուղացիությանը՝ նրա վերաբերմունքը դեպի մեր կուսակցությունը, պետք է ասեմ, — վոր վոչ միայն չկա անջատում, վորի մասին մի քանի ընկերներ խոսում էյին, վոչ միայն պրոլետարիատի և գյուղացիության հիմնական մասսայի մեջ խզվածություն չկա, — այլև այժմ նկատվում է, վոր միջակի վերաբերմունքը դեպի կուսակցությունը, դեպի պրոլետարիատը, դեպի խորհրդային իշխանությունն աճելի լավացել է: Այդ յերևույթի ցայտուն ապացույց է հանդիսանում վերջին շրջանում հացամթերումների հաջող ընթացքը, ի հարկե, յերբ մենք հարկադրված էյինք զիմել արտակարգ միջոցների, յերբ մենք պրոլետարական պե-

տութեան շահերի համար հարկադրված ելինք կուլակին պինդ խփել՝ միջակը տատանվեց, մենք շոշափեցինք նաև նրա ընթացիկ շահերը, բայց նրա հիմնական դասակարգային շահերը և նրա կապը պրոլետարիատի հետ ժամանակավոր տատանումներից ավելի ամուր դուրս չեկան:

Այդ տատանումները բնավ չի նշանակում խղում պրոլետարիատի հետ:

Մեր զարգացման տարրեր շրջաններում մենք ունեցել ենք և ունենք միջակ գյուղացիութեան տատանումներ, բայց պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի ուժը գերակշռել և տատանումների ուժից, այդ դաշինքը զգալի կերպով ամուր և միջակի տատանումներից:

Մենք այժմ դժվարություններ ունենք և մեծ դժվարություններ: Այդ դժվարությունները կապված են այն բանի հետ, վոր ինդուստրիայի աճման հետ համեմատած՝ մեր գյուղատնտեսության մակարդակը ցած է (այդ մակարդակը բարձրացնելը, ինչ ուզում ե լինի, մենք մեր նպատակն ենք դրձնում): Դժվարություններն ավելի կրկնապատկվում են մեր մի շարք հիմարություններից, խեղաթյուրումներից ու սխալներից:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր մենք չպետք է ամեն ինչ վերագրենք նրան, թե միջակի տատանումները որչեղտիվ պատճառներից են բղխում: Հաճախ նրան հարկադրում են տատանվել մեր սխալները կուսակցության միանգամայն ճիշտ քաղաքականությունը գործնականում կիրառելիս:

Որինակներ են պետք, հիտու չգնանք, վերցնենք

հարկի հարցը: Ներկա ընտրությունների ժամանակ անպայման հարկի հարցը հսկայական դեր կխաղա: Դասակարգային բացարձակապես ճիշտ հարկային քաղաքականությունը դեպքում, յերբ չքավորության 35 տոկոսը բոլորովին ազատվում է հարկից, միջակների ստորին խմբի, (մինչև 250 ռ. յեկամուտ ունեցող) հարկումը մնում է կայուն, անփոփոխ, իսկ հարկի ծանրությունը ընկնում է առաջին հերթին կուլակի, մի մասն ել ունեւոր միջակի վրա, — մենք գործնականում այնուամենայնիվ մի շարք խեղաթյուրումներ ենք տեսնում: Այդ, ի հարկե, դժգոհություն է առաջացնում միջակների մեջ:

Դրա հիման վրա մի քանի ընկերներ այն տսլավորությունն են ստանում, վոր կարծես թե մեր դրությունն այնքան ծանր է, վորին հավասարը չի յեղել ՆեՊ-ի բոլոր տարիներում: Այդ վոչ մի բանի վրա չհիմնված, մտացածին բան է: Ներկա դրությունը չի կարելի համեմատել 1924 թվի դրության հետ:

Ի հարկե, գյուղացիության մեջ յեղած տատանումները անդրադառնում են պրոլետարիատի առանձին խմբերի և նույնիսկ մեր կուսակցության առանձին անդամների տրամադրությունների վրա, վորոնք քաղաքական դրության գնահատման հարցում յերկրում դասակարգային ուժերի փոխհարաբերությունը սխալ են վորոշում: Իսկ գործի իրական դրությունը լիովին իրավունք է տալիս պնդելու, վոր այդպիսի գնահատություն վոչ մի հիմք չկա:

Ընտրությունների ժամանակ դասակարգային պայքարը արտահայտվում է ավելի սուր կերպով: Յեվ չնայած նրան, վոր մեր դասակարգային թշնամիները

ընտրական իրավունքից զրկված են,
 նրանք իրենց ակտիվութունը յերևան կբերեն, և վոր-
 քան մենք նրանց նկատմամբ մեր առաջխաղացումն
 ուժեղացնենք, նրանք ել կուժեղացնեն իրենց ակտի-
 վությունը:

Մենք վերընտրութունների ժամանակ դժվարու-
 թյուններ կունենանք վնչ միայն գյուղում, այլև քա-
 ղաքում:

Մենք գյուղում ել դժգոհություններ կտեսնենք:
 Սխալ կլինի ամեն ինչ վերագրել այն բանին, թե բո-
 լոր դժգոհությունները կուլակից են դուրս գալիս:
 Այստեղ պետք է ակտիվ դիմադրությունը տարբերել
 դժգոհությունից: Միջակ խավերի մեջ ել դժգոհու-
 թյան տարբերի արտահայտություն կլինեն: Այդ
 դժգոհությունը չպետք է մեծացնել, բայց պետք է
 տեսնել պարզ ու ճշգրիտ, ինչպես վոր պետք է տես-
 նել և կուլակի կաղմակերպության ու նրա դիմադրու-
 թյան ձևերը:

Կուլակային առանձին ազգեցություններ, իհար-
 կե, քաղաքում ել կարող են լինել: Պրոլետարիատը
 վորպես ամբողջութուն, ի հարկե, չի յենթարկվի վոչ
 մի յերերման, բայց մանր-բուրժուական ազգեցու-
 թյուն, առանձին տատանումներ և դժգոհություններ
 պրոլետարիատի վորոշ խավերում կարող են լինել:

Վրոմանք—այն պատճառով, վորովհետև իրոք վո-
 բոշ դժվարություններ կան, որինակ, պետք է ժամի
 ութին աշխատանքի գնալ, իսկ նա վաղում է հացի
 հերթ բռնելու: Իսկ ուրիշներն ել աշխատում են զրժ-
 գոհություններն ոգտագործել, վորպեսզի խայթեն
 Խորհրդային իշխանությանը, խայթեն կուսակցու-

թյանը, ցույց տան, թե ղեկավարությունը սխալ է:
 Մեկը քննադատում է ամբողջ բայշխիկական կուսակ-
 ցությունը, յերկրորդը քննադատում է Կենտկոմին,
 յերրորդը կքննադատի իշխանության տեղական մար-
 մինների ղեկավարությունը, իսկ չորրորդը բոլորը
 կընդհանրացնի, — մենչևիկորեն կսկսի Հոկտեմբերյան
 Հեղափոխությանը հարվածել:

Խնդիրն այն է, վոր այդ բոլորով հանդերձ վրոմանց
 պետք է կարողանալ ճիշտ բացատրություն տալ, ու-
 րիշներին — վճռական հակահարված:

Պետք է բացատրել, վոր կուսակցության, Խոր-
 հրդային իշխանության այժմյան քաղաքականու-
 թյանը մի այլ քաղաքականություն հակադրելն ան-
 խուսափելիորեն ղեպի մենչևիկ-եսերական ուղին է
 տանում: Իսկ մեր բայշխիկյան ուղին, վոր մենք առա-
 ջադրել ենք մասսաներին, այն է, վոր 11 տարի
 առաջ արդեն բռնած ուղին չթողնենք, առաջ ընթա-
 նանք, գիտենալով, վոր այդ դժվարին ուղի յե, տա-
 տասկոտ, գիտենալով, վոր այդ ուղիում մենք դեռ
 շատ դժվարություններ կունենանք:

Նա, ով ներքուստ հուսալքված է, նա, ով գլուխը
 կորցրել է ութթվել, նա իր հետևից մասսա չի տանի:
 Այդպիսի մարդուց բան դուրս չի գալ: Իսկ յերբ ներ-
 քին, բայշխիկական համոզմունք կա, վոր չնայած
 դժվարություններին մենք այնուամենայնիվ առաջ
 ենք գնում, վոր մենք մեր ուղուց չենք նահանջի,
 յերբ բանվորների ու գյուղացիների մոտ գնանք այս
 ներքին համոզմունքով, գաղափարական-հարձակողա-
 կան տրամադրությամբ նրանց վերաբերմամբ, ով-
 քեր ուզում են մեղ այդ ուղուց շեղել, այն ժամանակ,

մինքն հավատացած ենք, վոր մասսաները կգնան մեր հե-
տևից: Կասկած չի կարող լինել, վոր մեր կուսակցու-
թյունը հենց այսպես ել, բայձնիկորեն կկատարի
վերընտրությունները, վոր իրիստ մեծ քաղաքա-
կան նշանակություն ունեն:

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ

կուլակներին, նեպմաններին, սպեկուլյանտներին ընտրական իրավունքից զրկելու մեր գիծը վոչ մի դեպքում չպետք է մեղմացնենք: Մենք պետք է պահպանենք այն կուրսը, վոր մենք ընդունել ենք անցյալ տարի՝ ուղղելով այն թեւությունները, վոր նկատուել են առանձին շրջաններում: Այդ հարցի վերաբերյալ նյութերն ասում են, վոր մի կողմից վորոշ տեղերում նկատելի յեն փաստեր, յերբ իսկական կուլակը ընտրական ձայնից չի զրկվել, մյուս կողմից՝ մի շարք տեղերում հրահանգը նկատահարեալ, մեխանիկորեն կիրառելով ընտրական իրավունքից զրկել են վոչ միայն կուլակներին, այլև աշխատավոր գյուղացուն, վորը ժամանակավորապես, պատահաբար դայակ կամ թիւ ընտանիքի անդամներից մեկի հիվանդության պատճառով ժամանակավոր աշխատող է վերցրել. այս դեպքում ի հարկե, անձնական հաշիվներն ել են դեր խաղացել:

Ահա թե ինչու խորհուրդների ներկա ընտրու-
թյան ժամանակ անցյալ հրահանգով տրված հիմնական
գիծը չփոխելով, հնարավորություն չառնելով կուլակին
խորհուրդների մեջ սողոսկելու, վորին նա այնքան
ուժեղ կերպով ձգտում է, անհրաժեշտ է ընտրական

երաժշտութից զըկելու հարցին մտտենալ անհրաժեշտ ուշադրությամբ: Մինք պետք է ապահովենք, վոր վերընտրությունների ժամանակ չքավորությունը վոչ մի կերպ չճնշվի, վորովհետև, ցավոք սրտի, այժմ ել մի շարք գյուղերում և գավառակներում դեկավարող մարմինների կազմում շատ քիչ հարկից ազատվածներ (չքավորներ և բատրակներ) կան: Պետք է ել ավելի կազմակերպել չքավորությունը, և բատրակութունը և ուժեղացնել չքավորության, հատկապես բատրակների դիրքերը: Այդ, ի հարկի, չպետք է միջակին վանելու ձև ընդունի, և խորհրդից նրան վանի. կուլակի վրա հարձակում գործելու գիծը, նրան դեկավորությունից քշելը պետք է վոչ թե թուլացնի, այլ ուժեղացնի մեր կապիրը միջակի հետ:

[illegible]

ների և գործկոմների ակտիվությունն ու պատասխանատվությունը խորհուրդների վերընտրության գործնական աշխատանքներում:

Ընթացիկ կամպանիայում հատուկ ակտիվություն պետք է հայտնաբերեն կանայք և կոմյերիտիվությունը Բայց այդ ակտիվությունը պետք է քաղաքական ակտիվություն լինի, պետք է վնչ թե կանանց ու յերիտասարդության մեխանիկական առաջընթացն բնույթ կրի, այլ՝ պետական շինարարության մեջ նոր կադրերի իրական ներգրավում լինի:

Չպետք է մոռանալ, վոր ներկա վերընտրությունները մասսաների ակտիվության բարձրացման և նրանց պահանջների բարձրացման դեպքում դժվարությունների պայմաններում պետք է ընթանան: Այդ պատճառով առանձնապես կարևոր է, վոր այս ընտրական կամպանիան հատուկ պատրաստությամբ և ամենամեծ վոգեվորությամբ կիրարկվի:

Մենք գալիք ընտրություններին պետք է մասսայական բնույթ տանք, այդ գործին մասնակից դարձնելով ամբողջ կուսակցությունը, բոլոր պրոֆմիտությունները, խորհուրդների բոլոր պատգամավորներին, անկուսակցական բանվորների և գյուղացիների ամբողջ ակտիվը, իսկ գյուղում պետք է կադմակերպել չքավորներին ու բաղրակներին, Կուսկադմակերպությունները վերընտրությունների նախապատրաստական և ղեկավարության աշխատանքների ամբողջ ընթացքում պետք է նպատակ դնեն այն, վոր ընդհանուր կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու հետ պետք է շարժման մեջ դնել բոլոր կադմակերպությունների շարժիչ ուժերը, առաջին հերթին հենց իրենց խորհուրդ-

ներին: Չի կարելի խորհուրդներ ընտրել, առանց իրենց խորհուրդների, ճիշտ այնպես, ինչպես չի կարելի վերից աշխուժացնել խորհուրդներն առանց իրենց խորհուրդների և գործկոմների: Յեթե մենք վերընտրություններին հիմնավորապես նախապատրաստվենք, հենց այժմ կենտրոնացնենք մեր ուժերը, ինչպես գիտենք մեր կուսակցությունն անել, նախապատրաստենք նյութերը, հարցերը ճիշտ կերպով դնենք, հաշվառվությունները ճիշտ կերպով կադմենք, նախագծենք հրահանգները, մեր կուսակցության հիմնական գծին հարմարեցնենք այն գործնական կոնկրետ հարցերը, վորոնք կանգնած են մեր առաջ, այն ժամանակ մենք կարող ենք լուծել մեր առաջ ծառացած խնդիրները:

Մենք հսկայական չափով աճել ենք, և կուսակցության բոլոր ուժերը ոգտագործելու դեպքում մենք կարող ենք ընտրական կամպանիան անցկացնել վնչ միայն այնպես, ինչպես անցյալ տարի (յես կարծում եմ, վոր մենք չպետք է մնանք նույնիսկ անցյալ նվաճումների մակարդակի վրա), այլ կարողանանք ընթանալ առաջ, բարձրանալ հաջորդ աստիճանը:

Մենք պետք է մեր աշխատանքն այնպես ծավալենք, վորպեսզի սոցիալիստական եկոնոմիկայի ասպարիզում սկսած մեր հարձակմանը լիովին համապատասխանի և՛ կադմակերպչական-քաղաքական հարձակումը: Առաջիկա կամպանիայի մեր նշանարանը հենց այդ պետք է լինի. վերընտրությունները պետք է վերածվեն ուժեղ հարձակման մեր դասակարգային թշնամիների վրա՝ կուլակի, նեպոմանի, բյուրոկրատի և նրանց ձայնակցողների վրա: Ի ն չ պ ե ս գ յ ու

դուռ, նմանապես և քաղաքում վնչ
թի պաշտպանությունն կուլակներին
և նրանց ձայնակցողներին հարձա-
կումից այլ՝ հարձակում, ինչպես
համաքաղաքական գծով, նմանապես
և գյուղում արտահայտվող կուլա-
կային ակտիվության կոնկրետ կե-
տերում. ժողովներում պետք է կուլակներից վնչ
թի պաշտպանվել, այլ պետք է կարողանալ աշխատե-
կազմակերպել չքավորությանը, բառապահներին ու
պրոլետարիատին, վոր պաշտպանվելու փոխարեն կազ-
մակերպվի կուլակի դեմ նոր հարձակում, վոր կուլա-
կը ավելի հեռու շարտվի, իսկ միջակը լիովին և ամ-
բողջովին անցնի պրոլետարիատի կողմը:

Ահաբաժնուտ և մասսաներին խորը և հիմնովին
պարզաբանել՝ մեր նվաճումները, և՛ մեր թերու-
թյունները աշխատե, վոր այդ հարցերի քննությունը
մասսաներին քաղաքական հասունության նոր աստի-
ճան բարձրացնի. Ամրապնդել կուլակցու-
թյան դեկալարությունը մասսանե-
րի և ընտրությունների նկատմամբ,
կիրարկելով կուլակցության գիծը
վնչ թի գոգոռուցով և վնչ ել հրա-
մայելով, այլ ձևնհաս դեկալարութ-
յամբ, թույլ չառնելով թթվածություն
ու նեղություն, պահպանելով
կուլակցության և խորհրդային շ-
խանության ներկայացուցչի արժա-
նավայել տեսք:

Վերջնական կամպանիայի ժամանակ մեր լո-

գունգները պետք է լինեն. մասսաների ել ավելի
համախմբում՝ սոցիալիստական շինարարության խն-
դիրների շուրջը, յերկրի ինդուստրիալիզմի հիման վրա
կապիտալիստական ելմաններին հետագա ճնշում,
կոոպերացիան հետագա ծավալում, չքավորության
միախմբում կոլեկտիվ տնտեսություններում, խոր-
հրդային տնտեսություններին կազմակերպում և գյու-
ղատնտեսության բերքավորության բարձրացում:

Քաղաքական ասպարիզում — պրոլետարիատի,
չքավորության և բառապահների ղերքի ել ավելի ու-
ժեղացում, միջակի հետ դաշինքի ամրապնդում՝ կու-
լակների, սակկուլանտների և նապմանի դեմ մղելիք
անողորմ պայքարի հիման վրա:

Անողորմ պատերազմ բյուրոկրատիզմի, անշար-
ժության, պրոլետարական, չքավորական, միջակ մաս-
սաների կարիքներին անուշադիր և անտարբեր վերա-
բերվելու դեմ: Լայն ճանապարհ հարյուր հազարավոր
առաջավոր բանվորների, բանվորուհիների և գյուղա-
ցիների ու գեղջկուհիների գեպի պետական խորհրդային
ապարատը, ավելի յեռանդուն կերպով աշխուժացնելով
խորհուրդները և պետություն-կոմունայի վերաբերյալ
Մարքսի-Լենինի գաղափարների կենսագործման ու-
ղիով:

Ել ավելի ամրացնել բայլելիյան կուսակցության
զեկավարությունը մասսաների և նրանց որդանների՝
բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայիննե-
րի պատգամավորական խորհուրդների նկատմամբ, վո-
րովհետև միայն այդ կուսակցության ղեկավարության
ներքո խորհուրդները յեղել են և կմնան պրոլետարիա-
տի ղեկատառության մարմիններ, պատմական մեծ

պրոցեսի՝ սոցիալիզմի կառուցման կազմակերպիչներ
կուսակցության վերոհիշյալ խնդիրների ու
զուգահեռների հաջող կենսագործման ամենակարևոր նախ-
դրյալն են հանդիսանում — բանվորների և գյուղացի-
ամենաշատ մասսաների ներգրավումը ընտրու-
թյունների և հաշվետվությունների ու հրահանգների խու-
զործնական քննությունը:

Սրանք են այն լողուններն ու հիմնական խը-
ղիրները, վորոնք կանգնած են մեր առաջ պրոլետ-
րական դիկտատուրայի մարմինների նոր ընտրու-
թյունների շեմքին:

Կապիտալի ագրեսիվ հարձակմամբ ընդունվող
միջադեպին կացությունը, վորը մեր առաջ խնդիր
է գնում ամրապնդել խորհրդային Միության ուժն ու
պաշտպանակությունը, — ելավելի կհամախմբի մաս-
սաներին կուսակցության շուրջը:

Մենք գնում ենք դեպի ընտրություններ այն
հաստատ հավատով, վոր միլիոնավոր մասսաները մեկ
անգամ ևս կապացուցեն իրենց վստահությունը դե-
պի իրենց հարազատ ու մտերիմ լենինյան կուսակ-
ցությունը:



<< Ազգային գրադարան



NL0186630

38.11.

—